ոգւով սուտից ագահելոյ և ոչ դանկի միոյ, 'ի քննութիւն
արկցեն զխնդիրն, թէ ո՞րպէս մտանէին Հայք մինչեւ ցարդ
'ի Գերեզմանն յաւուր Ճրագալուցի, և թէ դիմեա՞լ իցեն
առ Պատրիարքն Յունաց, և յորո՞ւմ ժամանակի լեալ իցէ
առաջնութիւն նոցին, որ բացայայտ ետուն գրել 'ի հրո-
վարտակին իւրեանց. եւ արդարութեամբ ստուգեսցին
սեփհականութիւնք, կանթեղք եւ այլ ամենայն տեղիք
պարագայիւք՝ Հայոց և Յունաց 'ի տաճարի անդ, և հաս-
տատեսցի գրով և կնքով վերակացուաց, և զկնի ընթերց-
ման եւ գիտութեան Տէրութեան, արձանագրեսցի 'ի
տեղւոջ իւրում։

Եւ յաղագս վիճին Հայոց եւ Յունաց, որ պատահի 'ի
Ս. Յարութիւն, այլ եւս մի՛ տացի հրովարտակ, և զի իս-
պառ բարձցի խռովութիւնն 'ի միջոյ, եւ կարգաւորեսցի
խնդիրն, պատուէր տաջիք Կայսերական ատենին և Մօլլայէ
դիւանայ։

Գրիգոր Պատրիարք Երուսաղէմի։ Յովհաննէս Պատ-
րիարք Կոստանդնուպօլսի. եկեղեցականք Հայոց, եւ
այլք։

Ի հասանիլ հրամանի Կայսեր յԵրուսաղէմ. դատաւորն
արար ժողով մեծ, կոչեաց եւ զպալյազգի դռնապանն
Ս. Յարութեան, եկին և փոխանորդքն Հայոց և Յունաց և
ընթերցաւ հրովարտակն առաջի ամենեցուն։ Ապա եհարց
դատաւորն ցփոխանորդն Հայոց Հաննա վարդապետ, թէ
զի՞նչ իցեն խնդիրք ձեր, եւ նա պատասխանի եւ ասէ,
'ի սկզբանէ մինչեւ ցայսօր Կայսերական հրովարտակօք և
վաւերական գրովք հաստատեալ է երեկոյի Պասեքին Հա-
յոց և Յունաց 'ի միասին մտանել 'ի Գերեզմանն Քրիստոսի
և լուցանել զճրագունս։ Իսկ փոխանորդն Յունաց Նէոփի-
տոս 'ի նախընթաց ամի խաբէութեամբ հանեալ հրովար-
տակ, արգել զմուտս մեր, պատճառելով թէ մեր է ա-
ռաջնութիւնն, եւ թէպէտ 'ի վաւերական գրոց հաստա-
տեցաւ յայնժամ իրաւունքն Հայոց, այլ նա յեցեալ 'ի բա-
նըս հրովարտակին, ոչ կամեցաւ ունկն մատուցանել այնց
գրոց։ Իբրեւ հարցաւ եւ 'ի նմանէ, արար պատասխանի
եւ ասէ, ճշմարիտ են գրեանքն 'ի ձեռս Հաննա վարդա-
պետի, և ոչ երբէք բռնացեալ եմք 'ի վերայ Հայոց սակս